Արձանագրություն N 19/7-3

"ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-19/7" ծածկագրով ARMEPS համակարգի միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ամփոփման նիստի

ք. Երևան 31 հոկտեմբերի 2019թ. Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)	Ստ. Թաթիկյան,
Գնահատող անդամ (ԳԱ)՝	Գ. Ամատունի,
Բացող անդամներ (ԲԱ)՝	Վ. Սահակյան, Ա. Պետրոսյան,
Հանձնաժողովի քարտուղար (ՄՀմ)՝	Ա. Բաղրամյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՀՀ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության գնահատում:
2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում:
3. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցի մասին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության գնահատում

2.1 ՀՀ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության համաձայն առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցը՝ «Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

3. Առաջին տեղեր զբաղեցրած մասնակցի կողմից հաստատված, առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի գնահատում

3.1 Առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցը սահմանված կարգով և ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին է ներկայացրել իր կողմից հաստատված, առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը (Հրավերի հավելված NN 3 և 3.1): Ապրանքների ամբողջական նկարագիրը համապատասխանում է Հրավերով սահմանված՝ գնման առարկաների տեխնիկական բնութագրերին:

Հիմք ընդունելով 2.1 և 3.1 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-19/7 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ին ճանաչել ընտրված մասնակից:
2. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել <u>պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակցի իրական շահառուների մասին տվյալները</u>:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետը 5 օրացուցային օր է:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը սույն ընթացակարգի մասով Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	_____	Ստեփան Թաթիկյան
անդամներ	_____	Գայանե Ամատունի
	_____	Վահե Սահակյան
	_____	Արմեն Պետրոսյան
Հանձնաժողովի քարտուղար	_____	Արծրուն Բաղրամյան